

## ՆԻԿՈԼԱՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### ՆՈՐ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅԱՆԻՍԻ ՆՈՐԱՀԱՅՑ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՄԵՊԱԳՐՈՒՄ

Այանիսի (սեպագրի Ռոսախիմիլի նոր քաղաքի՝ Վանա լճի արևելյան ափին) հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված Ռուսա II-ի ծավալուն արձանագրությունը իր բազում և բազմաբնույթ նորույթներով զգալի հետաքրքրություն է ներկայացնում Ուրարտուի պատմության և բանասիրության ուսումնասիրության համար:

Այդ արձանագրությունը հնարավորություն է ընձեռում անդրադառնալու ուրարտերեն նոր բառերի մեկնաբանությանը, անցյալում հայտնի բառերի մասնագիտական գրականության մեջ վերագրված քարգնաությունների վերանայմանը, ուրարտերեն բառերի և նրանց շտամերական համապատասխանությունների բացահայտմանը, պաշտամունքային բնույթի խրթին տեքստերի համոզիչ իմաստավորմանը, հրատարակված արձանագրությունների կասկած հարուցող ընթերցումների ճշգրտմանը և եղծված ու պակասավոր հատվածների վերականգնմանը, տեղանունների մատուցված նոր տարբերակների կանխորոշմանը և այլն:

Հետևաբար, հաշվի առնելով, որ քննարկման ենթակա հարցերի շրջանակը բավական ծավալուն և խայտաբղետ է, ծրագրել ենք մախօրոք առանձին հոդվածաշար, իսկ հետագայում մաև հատուկ մեմագրություն նվիրել դրանց ուսումնասիրությանը: Ելնելով ասվածից, սույն հոդվածում առայժմ բավարարվում ենք սուկ երեք անհայտ բառերի ստուգաբանությամբ:

#### **իֆերիմի և Եֆինիմի բառերի ստուգաբանությունը**

Այանիսի նոր արձանագրության փաստական նյութի հիման վրա վերջերս ստույգ պարզվել է, որ **իֆերիմի** բառը առաջին անգամ հիշատակվել է դեռևս XIX դարի 80-ական թվականներին հրատարակված Մենուայի մի արձանագրության մեջ, որը ծագում է Յոլակերտից (Մեծ Արա-

բառի հյուսիսային լանջին)<sup>1</sup>: Սակայն աննշան չափով եղծված լինելու պատճառով (տուժած է այդ բառի սոսկ առաջին i վանկը) երկար ժամանակ հարկադրաբար անատեմել է այն մասնագիտական գրականության մեջ:

Թվում էր, թե XX դարի 60-ական թվականների սկզբին Կարմիրբլուրում հայտնաբերված Ռուսա II-ի ծավալուն արձանագրությունը կարող էր վերջակետ դնել *išerhini*-ի ուղղագրության ատթիվ եղած անտեղյակությանը: Սակայն այս անգամ էլ, փաստական նյութի սակավության պատճառով, հիշյալ բառի սկզբի հիանալի պահպանված i վանկը մասնագետների կողմից անգուշաբար վերագրվել է նրան մախորդող LUGAL-tuhini «արքայական» բառակապակցությանը և, այդպիսով, կարծեցյալ \**serhini*-ն սխալմամբ առնչվել *šeri* հայտնի բառի հետ<sup>2</sup>:

Սեզ հետաքրքրող *iserhini*-ն, ի վերջո, կրկնակի հիշատակվում է նաև Ռուսա II-ի Այանիսի նորահայտ ծավալուն արձանագրության մեջ, որի հիման վրա վերջնականապես ճշգրտվում է այդ բառի ուղղագրությունը<sup>3</sup>: Հատկանշական է, որ երկու դեպքում էլ *išerhini*-ն այստեղ հանդիպում է առդասկզբին՝ հիանալի պահպանված վիճակում, ուստի նրա ընթերցման հավաստիությունը բացարձակապես ոչ մի կասկած չի հարուցում:

Համառոտակի այս ներածականից հետո, կարծում ենք, ժամանակագրական կարգով արժե անդրադառնալ Մենուայի և Ռուսա II-ի վերոհիշյալ արձանագրությունների կոնկրետ փաստական նյութին և հարկ եղած չափով պարզել, թե ինչ կարելի է ասել նրանց և ուրարտական այլ իդեոտիկ տեքստերի հիման վրա *išerhini* բառի մասին:

Ահա Մենուայի՝ Յոլակերտում հայտնաբերված արձանագրության մեջ հետաքրքրող հատվածը.

1. [<sup>d</sup>Hal]-di-ni-ni uš-ma-ši-n[i]
2. [i]-ú <sup>m</sup>Me-nu-a-še <sup>m</sup>Er-ku-a-ḫ[i]
3. [KUR-n]i i-ú <sup>URU</sup>Lu-ḫi-ú -ni-ni KUR-ni
4. [i]-še-er-ḫi-ni i-ni e-si
5. [<sup>m</sup>Me]-nu-a-še e-si-ni-ni du-ni
6. [ši-d]i-iš-tú-a-li <sup>d</sup>Hal-di-ni-li KÁ
7. [É. GAL ba-du-[s]i-i-e<sup>4</sup>

Ի դեպ արժե առայժմ ձեռնպահ մնալ սոսկ այս արձանագրության փաստական նյութի հիման վրա անմիջապես միակողմանի դիմել *išerhini* բառիմաստի բացահայտմանը: Նման հապճեպությունը, կարծում ենք, ինչ-որ պարագայում կարող է կասկածներ հարուցել: Ուստի զանում ենք ավելի նպատակահարմար դրան անդրադառնալու իդեոտիկ բոլոր արձանագրությունների մատուցած տվյալների քննարկումից և



ամփոփումից հետո: Սակայն, մյուս կողմից, զգացվում է հրատապ անհրաժեշտություն այստեղ հայանցիկ կանգ առնելու նաև Յուլակերաի արձանագրության քեև սուղ, բայց մեզ հետաքրքրող հարցի լուծման համար արտակարգ հետաքրքրություն ներկայացնող որոշ այլ փաստերի վրա:

Նախ, աչքի է զարնում այն փաստը, որ Յուլակերաի արձանագրության բերված հատվածի սկզբնամասում, գրագրի անվտայության պատճառով, բացակայում է նախադասության հասու «նվաճեց» ստորոգյալը (բայր): Խոսքը այստեղ էրիկուախի երկրի և նրա Լուխիունի կենտրոնի նվաճման մասին է: Սակայն նրա փոխարեն, չգիտես ինչու, տեքստում հանիրավի կրկնակի մատուցված է իս «երբ» բառը՝ և էրիկուախի երկրի, և Լուխիունի քաղաքի կապակցությամբ:

Ի դեպ, չնայած հասու «նվաճեց» անցողիկ բայի անտեսմանը և իս «երբ» ստորադասական շաղկապի անհարկի կրկնությանը, մյուս կողմից, արտակարգ հետաքրքրություն է ներկայացնում արձանագրության մեզ հետաքրքրող *išerhini* բառին հաջորդող հատվածը, ուր ասված է *ini esi* <sup>m</sup>*Menuaše ešini duni šidištuali* <sup>4</sup>*Haldinili KÁ É. GAL badusie*: Նշենք, որ այստեղ բերված հատվածի հիմնական բովանդակությունը փաստորեն արդեն հայտնի է գիտությանը: Տվյալ դեպքում ընդհանուր առմամբ խոսքը վերաբերում է Մենուայի կողմից տվյալ վայրը (*ini esi*) *ešini duni* (*ešini* դարձնելու) մասին, որը պայմանավորված է եղել Խաղթյան դրոնեռի (<sup>4</sup>*Haldinili KÁ*), այսինքն՝ տաճարի և ամրոցի (*É. GAL*) հոյակապ (*badusie*) կառուցմամբ (*šidištuali*):

Հետևաբար, Մենուայի Յուլակերաի արձանագրության վերոհիշյալ հատվածում առայժմ ըստ էության անհայտ է մնում տուկ *ešini* բառիմաստը, քանի որ *ešini duni* բառակապակցության մեջ ևս հայտնի է *duni* «դարձրեց» բայիմաստը, որը ուրարտական սեպագրում հաճախ հանդես է գալիս *d(u)* «անել», «դարձնել» նշանակությամբ և ինքնուրույն, և *abili-d(u)*, *uedia-d(u)*, *ueli-d(u)* բարդված ձևերով: Ինչ վերաբերում է *ešini* բառին, ապա փաստական նյութի ծայր աստիճան տղության պատճառով, առայժմ այն շարունակում է մնալ ուրարտերենի բառապաշարի ուսումնասիրության ենթակա ոչ սակավ պրոբլեմատիկ հարցերի շարքում. նրան երբեք չեն անդրադարձել ոչ ուրարտական արձանագրությունների հայտնի դիվաններում, ոչ էլ այլ հետազոտություններում: Ըստ որում *ešini* բառիմաստի բացահայտումը, ինքնին հասկանալի է, կոչված է ըստ ամենայնի ամբողջացնելու Յուլակերաի KYKH, 48 արձանագրության վերոհիշյալ հատվածի բովանդակությունը: Դեռ ավելին, այն կարող է վերջնական լույս սփռել այդ բառը հիշատակող նորահայտ արձանագրությունների համապատասխան հատվածների վրա և, այդպիսով, կայուն տեղ գրավել ուրարտերենի բառարաններում:

Այնուհետև, հատկանշական է. որ բացի խնդրո առարկա Յուա-կերտի արձանագրությունից *ešini(ni)* –ն հանդես է գալիս նաև Մենուայի մի պակասավոր արձանագրության մեջ: Ընդհատ է, այն ծագում է այլ վայրից՝ Գյուզակից (այժմյան Կարաթավուք) Վանա լճի հյուսիս–արևելյան ափին, սակայն Յուալկերտի արձանագրության հետ ունի անվիճելի ընդհանրություններ: Գյուզակի արձանագրության մեջ ևս հիշատակվում է Էրիկուախի երկրի կենտրոն Լուխիունին: Այստեղ ստկա է նաև ուրարտերեն *patari* «քաղաք» բառը, որը ըստ էության փոխարինում է Յուալկերտի արձանագրության *E.GAL*–ին, այսինքն՝ ամբողջն<sup>5</sup>:

Ի լրումն ասվածի, Գյուզակից ծագող իդենտիկ, նույնպես պակասավոր մի արձանագրության մեջ ևս դարձյալ հիշատակվում է նույն Լուխիունին, ինչպես նաև <sup>6</sup>*Haldinili KA*<sup>MES</sup> *badusi*–ն, այսինքն՝ հոյակապ տաճարի հիմնադրումը<sup>6</sup>: Եվ, վերջապես, մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ զգալի հետաքրքրություն է ներկայացնում դարձյալ ուրարտական նույն թագավորի Վանի թանգարանում պահպանվող մի այլ արձանագրություն, որը նույնպես հիշատակում է Էրիկուախի երկրում հիմնադրված տաճարի (<sup>7</sup>*Haldinili KA*) և ամբողջի (*E.GAL*–ni) մասին, ըստ որում վերջինիս տակ ենթադրվում է հենց Մենուախիցիլին<sup>7</sup>:

Այսպիսով, վերոհիշյալ փաստերը, ակներևաբար, վկայում են, որ Մենուայի թվարկված բոլոր արձանագրությունները պատմում են ուրարտական այդ թագավորի շինարարական միևնույն ձեռնարկումների մասին Արարատյան դաշտավայրում՝ Արաքսի ձախափնյա հատվածում: Հետևաբար, *ešinini* բառը (կամ *ešinini duni* արտահայտությունը), ըստ երևույթին, Յուալկերտի *KYKH*, 48 և Գյուզակի *KYKH*, 50 արձանագրությունների նման, ստկա է եղել (կամ ենթադրվում է) նաև վերոհիշյալ բոլոր արձանագրություններում: Ի դեպ չնայած Վանի թանգարանի համարյա անթերի պահպանված *KYKH*, 101 արձանագրությունը չի հիշատակում *ešinini duni* արտահայտությունը, սակայն նկատի ունենալով, որ այն փաստորեն կրկնում է Յուալկերտի *KYKH*, 48 արձանագրության մեջ մատուցվող իրողությունը՝ Արարատյան դաշտավայրի Էրիկուախի երկրում հոյակապ ամբողջի՝ Մենուախիցիլի և Խալդյան տաճարի հիմնադրման մասին, կարծում ենք, ավյալ դեպքում մեզ ետաքրքրող *esinini duni*–ն այնտեղ ևս ինքնին ենթադրվում է:

Սի խոսքով, ելնելով վերոհիշյալ ամբողջ շարադրանքից, մենք հակված ենք Յուալկերտի և Գյուզակի արձանագրությունների *esinini* բառի համար առաջարկել «բնակելի», իսկ *esinini duni* արտահայտության՝ «բնակելի դարձրեց» մեկնաբանությունը: Ըստ երևույթին, բոլոր դեպքերում ակնարկվում է նախկինում անմարդաբնակ, ամայի տարածքները (որոնց մասին հաճախ նշում են ուրարտական արձանագրությունները) բնակելի դարձնելու մասին՝ նրանցում ինչպես ռոզման



լայն ցանց ստեղծելու և երկրագործական ու այգեգործական-խաղողագործական ձեռնարկումների, այնպես էլ քաղաք-ամրոցների և տաճարների հիմնադրման շնորհիվ:

Վերևում մենք հպանցիկ կանգ առանք *ešinini*-ի մեկնաբանման վրա, նկատի ունենալով, որ Յուլակերաի *KYKH*, 48 արձանագրության մեջ սուկ այդ բառիմաստն է *išerhīni* հետ միասին, կարոտ բացահայտման: Ուստի *ešinini*-ն կոչված է ըստ ամենայնի ամբողջացնելու ոչ միայն հիշյալ արձանագրության, այլև ուրարտական իդենտիկ այլ մանավանդ Գյուզակի տեքստի նման պակասավոր, արձանագրությունների, համանման հատվածների իմաստավորումը:

Իսկ այժմ վերստին անդրադառնանք հողվածի այս բաժնի հիմնական հարցին՝ *išerhīni* բառի մեկնաբանությանը, մեր ուշադրությունը, բնականաբար, սկեռելով Ռուսա II-ի Կարմիր-բլուրում հայտնաբերված *KYKH*, 424 արձանագրության վրա, որի 3-4-րդ տողերում ասված է.

i-u-me <sup>4</sup>Hal-di-še LUGÁL-ti-ji a-ru-ni na-ja-<di <sup>LU</sup>AD-si-ni>  
e-si-i LUGÁL-ti-ji-ni i-se-er-ji-ni i-ni-li <sup>4</sup>Hal-di-ni-li K[Á s]i-di-is-ti-u-li ba-du-si-e

«Երբ-ինձ Խալդի աստվածը թագավորություն պարգևեց (և) բազմեցի (ես) հայրական. արքայական գահին, *išerhīni* այս Խալդյան դռները (տաճարը) կառուցեցի հոյակապ»:

Եվ, այսպես, Մենուայի Յուլակերաի և Ռուսա II-ի Կարմիր-բլուրի արձանագրությունների վերը մատուցված հատվածների փաստական նյութի համադրությունից այքի է զարնում այն փաստը, որ նրանցում երկու դեպքում էլ, ակներևաբար, մատնացույց է արվում ուրարտական հիշյալ թագավորների կողմից տարբեր վայրերում համանման շինարարական աշխատանքների ձեռնարկման ժամանակի մասին: Այլ կերպ ասած, մի դեպքում Մենուան Արարատյան դաշտավայրի Արաքսի աջափնյա հատվածը՝ այժմյան Յուլակերաի տարածքը բնակելի է դարձրել և այնտեղ կառուցել հոյակապ Խալդյան դռներ (տաճար) և ամրոց այն ժամանակ, երբ նրա կողմից Խալդի աստծո գործությամբ նվաճվել է Էրիկուախի երկիրը՝ Լուխիտոնի կենտրոնով հանդերձ, իսկ մյուս դեպքում Ռուսա II-ը Կարմիր-բլուրում հոյակապ Խալդյան դռներ (տաճար) է կառուցել այն ժամանակ, երբ գերագույն աստված Խալդին պարգևել է նրան արքայական գահը: Ի դեպ, *KYKH*, 424 արձանագրությունը, կարծես, միաժամանակ վկայում է, որ ոչ միայն Թեյշերաինի տաճարի, այլ հենց իր՝ Թեյշերաինի քաղաք-ամրոցի հիմնադրումը ընդհանրապես համընկել է Ռուսա II-ի կողմից արքայական գահը ստանձնելու պահին:

Ինչ վերաբերում է ուրարտական թագավորի՝ Ռուսա II-ի Այանի-սից ծագող իդենտիկ նոր արձանագրությանը, ապա նրանում *išerhīni* բառը հիշատակվում է կրկնակի, ըստ որում տարբեր կարգի կոնտեքստ-

ներում: Մի դեպքում, կարելի է ասել, այն լիովին համընկնում է Կարմիր-բլուրի վերոհիշյալ KYKH, 424 արձանագրության տեքստին՝ սուկ այն անընչան տարբերակով, որ եթե –me «ինձ» անձնական դերանունը այնտեղ կցված է իս «երբ» բառին (iu–me «երբ–ինձ»), ապա Այանիսի արձանագրության մեջ me–ն կցված է Խալդի դիցանվանը (<sup>d</sup>Haldiš–me «Խալդին–ինձ»): Հետևաբար, դա նշանակում է, որ այստեղ ևս, նույն Ռուսա II–ի Կարմիր-բլուրի արձանագրության նման, մեզ հետաքրքրող išerhini–ն ակնարկում է, որ Խալդյան դոների (աաճարի) հոյակապ կառուցումը (išerhini inili <sup>d</sup>Haldinili KÁ šidištuli badusie) ժամանակագրորեն անմիջապես հետևել է Խալդի աստծո կողմից ուրարտական արքային գահ պարզելուն (iu–me <sup>d</sup>Haldiše LUGÁL–tuhi aruni nahadi <sup>LU</sup>AD–sini esi LUGÁL–tuhini) <sup>8</sup>:

Իսկ քանի որ Ռուսա II–ի Այանիսի արձանագրության մեջ խնդրո առարկա iserhini բառի մյուս հիշատակությունը հանդես է գալիս արդեն այլ կարգի, ըստ որում բավական ծավալուն և անհասկանալի բառապաշարով համեմված կոմտեքստում, ապա փաստական նյութը հնարավորին տեսանելի դարձնելու համար նպատակահարմար ենք գտնում մատուցել այն այստեղ հատվածաբար.

... aše TAG qutumenaue tanuli MÁŠ.TUR <sup>d</sup>Haldie nipsidulini UDU <sup>d</sup>Haldie TAG UDU <sup>d</sup>IM–a UDU <sup>d</sup>UTU–nie UDU <sup>d</sup>Arubainie UDU <sup>d</sup>Haldinaue BE.LI UDU <sup>d</sup>Haldinaue KÁ UDU <sup>d</sup>Ua UDU DINGIR<sup>MEŠ</sup>–ue ... <sup>d</sup>Haldina KÁ išerhini šaluli uilatini...<sup>8</sup>

Բերված հատվածը, զուցե, առաջին հայացքից հապճեպ տալովորություն բողնի, թե իբր այն բացարձակապես ընդհանուր ոչինչ չունի išerhini բառը հիշատակող մեզ հայտնի Յուլակերտի KYKH, 48, Կարմիր-բլուրի KYKH, 424 և Այանիսի նոր արձանագրությունների վերոհիշյալ հատվածների հետ: Սակայն սույն տեքստի մանրագնին քննարկման դեպքում ըստ ամենայնի բացահայտվում է, որ այստեղ սուկ փաստական նյութն է տարբեր, այն դեպքում, երբ նրա մատուցման ձևը մնում է նույնը: Իսկ išerhini բառիմաստի բացահայտման համար, ինչպես դա կպարզվի ներքևում, կարևորը հենց նյութի մատուցման ձևն է: Դրանում համոզվելու համար արժե բերված հատվածի aše և մեզ հետաքրքրող išerhini բառերի մատուցման ձևը համադրել Յուլակերտի, Կարմիր-բլուրի և Այանիսի (տես սաղեր 4–5) արձանագրությունների իս և išerhino տարբերակների հետ: Այդ դեպքում աչքի է զարնում այն փաստը, որ սույն aše «երբ» տարբերակին համապատասխանում է վերոհիշյալ տեքստերի իս «երբ» նույնիմաստ բառը: Այլ կեպ ասած, մի դեպքում առկա են միևնույն «երբ» իմաստն արտահայտող aše և իս բառերը, իսկ մյուս դեպքում՝ երկու տարբերակներում էլ միևնույն išerhini բառը:



Այժմ տեսնենք, թե առաջարկված մտահղացումը որքանով է արդարացնում իրեն Այանհիսի նոր արձանագրության տեքստի այն երկրորդ տարբերակում, ուր ասված է. Երբ զոհաբերվել են ուլ Խաղդիին, ոչխար՝ Խաղդիին, ոչխար՝ Թեյշերային, ոչխար՝ Շիվինիին, ոչխար՝ Վարուբանիին, ոչխար՝ Խաղդյան զենքին, ոչխար՝ Խաղդյան դռներին (տաճար), ոչխար՝ Ուային, ոչխար՝ (այլ) աստվածներին Խաղդյան դռներում, այսինքն՝ տաճարում, ապա պաշտամունքային այդ արարողության ժամանակ տեղի է ունեցել նաև խաղողի մատուցում (iṣerhīni ḥalulī uilatīni):

Հետևաբար, iu-ի և iṣerhīni-ի ամկայության դեպքում, երբ (iu) ուրարտական թագավորները ստանձնում են արքայական զահը, ապա այն ժամանակ էլ (iṣerhīni) նրանց կողմից ձեռնարկվում են տաճարների և ամրոցների շինարարություն, ինչպես նաև տվյալ վայրի բնակեցում (ini esi esinini duni), իսկ aše-ի և iṣerhīni-ի դեպքում, երբ (aše) տաճարում ձեռնարկվում են կենդանիների զոհաբերություններ ի պատիվ ուրարտական աստվածների, Խաղդյան զենքերի և այլնի, ապա այն ժամանակ էլ (iṣerhīni) պաշտամունքային արարողություններում տեղի է ունենում նաև խաղողի մատուցում (ḥalulī uilatīni): Մի խոսքով, որ կողմից էլ դիտարկելու լինենք մեզ հետաքրքրալ ուրարտական արձանագրությունների համապատասխան հատվածները, ապա բոլոր դեպքերում iṣerhīni բառը նրանցում, ակներևաբար, արտահայտում է ժամանակի հասկացություն: Ի վերջո iṣerhīni բառիմաստը բացահայտելու համար, կարծում ենք, առանցքային նշանակություն ունի Սարդուրի II-ի Կարաթաշի KYKH, 274 արձանագրությունը, ուր ասված է.

<sup>mk</sup>Sardurise <sup>m</sup>Argištiḥiniše alie iu <sup>d</sup>Ḫaldiš-me LUGÁL-tulji aruni nahadi <sup>L</sup>AD-sini esi LUGÁL-tuljini ikukani MU terubi É.GAL badusie <sup>md</sup>Sarduriei URU tini

Սարդուրին, Արգիշտիի որդին, ասում է. Երբ Խաղդի աստվածինձ թագավորություն պարզևեց (և) բազմեցի (ես) հայրական զահին արքայական, նույն տարում հիմնեցի ամրոց հոյակապ՝ «Սարդուրիի քաղաք» անվամբ:

Այս կապակցությամբ, բնականաբար, առաջին հայացքից կարող է հարց ծագել, թե ի՞նչ գործ ունի այստեղ Սարդուրի II-ի վերոհիշյալ արձանագրությունը iṣerhīni բառիմաստի բացահայտման համար, քանի որ այդ բառը այնտեղ նույնիսկ չի հշատակվում: Սակայն դրա կողքին ակամայից աչքի է զարնում այն արտակարգ կարևոր փաստը, որ այստեղ ըստ էության մենք գործ ունենք iṣerhīni-ն հիշատակող տեքստի կրկնագրի (դուպլիկատի) հետ: Հատկանշական է, որ երկու դեպքում էլ այդ տեքստերում կրկնվում են միևնույն փաստերը, այսինքն՝ նոր տաճարների և ամրոցների շինարարությունը, որը տեղի է ունեցել թագավորների

կողմից արքայական զահը սաանձնելուց հետո՝ «այն ժամանակ» (iŝerhini) կամ նույն տարում (ikukani MU):

Ի դեպ, վերոհիշյալ փաստերից միաժամանակ աչքի է զարնում այն հանգամանքը, որ iŝerhini-ն և ikukani MU-ն ուրարտական սեպագիր տեքստերում սովորաբար հանդես են գալիս այն դեպքերում, երբ ավյալ տեքստը արտահայտվում է իս «երբ» բառով: Ըստ որում այդ կարգի կոնտեքստների հետազոտությունը բացահայտում է, որ նրանցում iŝerhini բառը կամ ikukani MU բառակապակցությունը, ճիշտ է, միշտ չէ, փաստացի արտահայտվում են տեքստերում, սակայն դրանց իմաստները, այնուամենայնիվ, ինքնին ենթադրվում են: Առաջարկվող հետևության մեջ համոզվելու համար բազմաթիվ նման կոնտեքստներից ստորև բերենք սոսկ երեք պատասխիկ.

1) ...<sup>m</sup>Menuaŝe <sup>m</sup>Iŝpuiniehe iu <sup>LU</sup>ateini esi nahubi <sup>KUR</sup>Saturuni durbaie manu<sup>10</sup>

...Մենուան, Իշպուինիի որդին, երբ հայրական տեղը (զահը) բարձրացավ, Շատիրունի (երկիրը) ապստամբել էր...

2) <sup>m</sup>Menuaŝe <sup>m</sup>Iŝpuinihiniŝe ... iu <sup>h</sup>Haldinili KÁ ŝidiŝtuali E.GAL ŝidiŝtuni badusie teruni <sup>h</sup>Haldi patari tini ini <sup>GIS</sup>suldi teruni <sup>GIS</sup>sarie...<sup>11</sup>

Մենուան, Իշպուինիի որդին, ... երբ Խալդյան դռներ (տաճար) կառուցեց, ամրոց կառուցեց հոյակապ, հիմնեց Խալդի անվամբ քաղաք, այս խաղողի այգին հիմնեց, պտղատու այգին...

3) <sup>m</sup>Sarduriŝe <sup>m</sup>Argiŝtiniŝe alie iu <sup>KUR</sup>Ŝhimeali haubi biduiaŝe ikukani KASKAL haubi <sup>URU</sup>Maqaltuni...<sup>12</sup>

...Սարդուրին, Արգիշտիի որդին ասում է. Երբ Ուխիմեալի երկիրը նվաճեցի, վերադարձին նույն ճանապարհին նվաճեցի (նաև) Մակալաունի քաղաքը...

Հետևաբար, դժվար չէ նկատել, որ ուրարտական արձանագրությունների ցիտված հատվածներից առաջինում iŝerhini-ն կամ ikukani MU-ն, չնայած առանց կոնկրետ հիշատակության, այնուամենայնիվ ինքնին ենթադրվում է nahabe բայի և <sup>KUR</sup>Ŝaturuni երկրանվան, երկրորդում՝ badusie մակբայի և teruni բայի, իսկ երրորդում՝ haubi բայի և biduiaŝe գոյականի միջև:

Այստեղ մեզ մնում է սոսկ ավելացնել, որ Այանիսի նոր արձանագրության հրատարակիչ Միրյո Աավիհինի տեքստի թարգմանության մեջ iŝerhini բառի կողքին (փակագծում) իրավացիորեն ենթադրում է նրա adverb, այսինքն՝ մակբայ լինելու հնարավորությունը<sup>13</sup>: Եվ, իսկապես, նյութի հանգամանադի ուսումնասիրությունը, ինչպես երևում է, հաստատում է իտալացի ականավոր արևելագետի կռահումը, քանի որ ուրարտերեն հիշյալ բառի համար մեր առաջարկած «այն ժամանակ» (тогда)



թարգմանության համաձայն, *išerhini*-ն իսկապես մակրայ է, այն էլ ժամանակի մակրայ:

### Տիտի բառի ստուգաբանությունը

Այս քստը ուրարտական սեպագիր աղբյուրներում հանդիպում է սոսկ երկու անգամ: Դրանցից մեկը գիտությանը հայտնի է վաղուց՝ դեռևս Արգիշտի I-ի Խորհարյան տարեգրության կրկնագրերի (դուալիկատների) առաջին հրատարակություններից<sup>14</sup>, իսկ մյուսը՝ Այանիսի հնագիտական պեղումներում վերջերս մատուցված Ռուսա II-ի ծավալում արձանագրությունից<sup>15</sup>:

Ի դեպ, *šišini* բառի ոչ միայն մեկնաբանությունը, այլև նույնիսկ ընթերցումը մասնագիտական գրականության մեջ ի սկզբանե տեղիք է տվել զգալի տարակարծությունների: Ուրարտական արձանագրությունների դիվանի հեղինակ Գ. Ա. Սելիքիշվիլին, օրինակ, *šišini* MU-ի փոխարեն առաջարկել է *šišidu mu* (?) գաղափարագրերի կոմբինացիան, որից, սակայն, հարցականի տակ թարգմանել է սոսկ MU-ն՝ «տարին»<sup>16</sup>: Ինչ վերաբերում է *šišini* ընթերցմանը, ապա այն հաստատվել է Ա. Գյոցեի ջանքերի շնորհիվ՝ բացատելով, այնինչ, այդ բառի մեկնաբանությունը<sup>17</sup>:

Հետագայում Ա. Գյոցեի բացահայտած *šišini* ընթերցումը ուրարտական արձանագրությունների իր դիվանում ընդունել է Ֆ. Վ. Քյունիզը՝ անտեսելով նույնպես այդ բառիմաստի քննարկումը: Իսկ ավելի ուշ այդ բառի մեկնաբանությանը առաջինը անդրադարձել է սոսկ Ի. Մ. Դյակոնովը՝ կապելով այն առայժմ արձանագրություններում չվկայված \**šišē*-ի հետ, որի տակ նա ենթադրել է հայտնի III-*še*-ն, ուստի ընկալել որպես «երեք»<sup>18</sup>:

Երկար ժամանակ եռսպի փաստական նյութի բացակայության պայմաններում Ի. Մ. Դյակոնովի կարծիքը ստիպված է եղել կրկնելու տողերիս հեղինակը՝ վերջերս հրատարակած ուրարտական արձանագրությունների իր դիվանում: Իսկ Սիբյա Մարվինին Այանիսի նորահայտ արձանագրության իր հրատարակության մեջ հակված է *šišini*-ն մեկնաբանելու երկրորդ անգամ (*second time*)՝ նկատի ունենալով, որ պաշտամունքային արարողությունների ժամանակ Ինուա (նի) դիցուհուն միևնույն տեքստում երկու անգամ է մատուցվում ոչխարի զոհաբերություն՝ *UDU 4Inuanie ... UDU 4Inuanie šišinie*<sup>21</sup>:

Սակայն ներկայումս առկա թեև սուր, բայց ըստ ամենայնի արժեքավոր փաստական նյութի հանգամանակի քննարկումը վկայում է, որ *šišini*-ի համար առաջարկված «երեք» և «երկրորդ անգամ» թարգմանությունները հավասարապես արդարացում չեն գտնում ոչ Խորհարյան

տարեգրության կրկնագրում, ոչ էլ Այանիսի նորահայտ արձանագրության մեջ: Ուստի այդ բառի ընթերցման և մեկնաբանության նախապատմությանը հատկացված վերոհիշյալ հակիրճ նախաբանից հետո, կարծում ենք, արժե վերստին անդրադառնալ մեզ հետաքրքրող ուրարտական տեքստերի հոգատար հետազոտությանը:

Եվ, այսպես, ճիճու բառը հիշատակող Խորխորյան տարեգրության կրկնագրերից մեկում ասված է.

[<sup>m</sup>A]r-gi-iš-ti-še a-li-e a-li-e-li LUGÁL<sup>meš</sup> [a]r-nu-i-a-li <sup>m</sup>Di-a-ú-hi-ni-e ši-ši-ni MU [ha]-ú-bi <sup>KUR</sup>Lu-šá-e KUR-ni-e <sup>KUR</sup>Ka-tar-za-e KUR-ni-e [<sup>m</sup>E]-ri-a-hi KUR-ni-e <sup>KUR</sup>Gu-lu-ta-hi...<sup>22</sup>

Այս տեքստը ակամայից հիշեցնում է ուրարտական տարեգրությունների այն հատվածները, որոնցում տվյալ տարվա հերթական արշավանքների ժամանակ օտար երկրների նվաճումը ներկայացվում են ikukani MU haubi «նույն տարում նվաճեցի», ikukani MU šištini (կամ՝ šišuhani, tarani) haubi «նույն տարվա šištini-ին (կամ՝ šišuhani-ին, tarani-ին) նվաճեցի» նախաբաններով: Գիտության մեջ, իհարկե, առայժմ համոզիչ մեկնաբանություն չունեն ճիճու, šišuhani, և tarani բառիմաստները. մասնագիտական զրականության մեջ դրանց տակ սոսկ վարձել են եմքադրել տարվա եղանակների անվանումները կամ տվյալ տարում ձեռնարկված արշավանքների հերթականությունը: Սակայն խնդրո առարկա ճիճու բառի այս կամ այն չափով համոզիչ մեկնաբանության համար դա չէ կարևորը. շատ ավելի կարևորն այն է, որ վաղուց ի վեր ըսա ամենայնի հաստատված է ikukani MU (ššli) «նույն տարում» բառակապակցությունը, որի տարրերակն է, ամենայն հավանականությամբ, մեզ հետաքրքրող ճիճու MU-ն:

Հետևաբար, ելնելով վերը արծարծված փաստական նյութից և նրա առթիվ արված խորհրդածություններից, մենք հակված ենք ուրարտերենի առայժմ անհայտ ճիճու-ն համարելու վաղուց հայտնի ikukani-ի հոմանիշը, ուստի ճիճու MU-ի համար առաջարկելու «հիշյալ տարում» թարգմանությունը: Կարծում ենք, որ դա լիովին արդարացնում է իրեն Խորխորյան տարեգրության կրկնագրի մեզ հետաքրքրող վերոհիշյալ հատվածում, որը թարգմանաբար բերում ենք ստորև.

«Արգիշահն ասում է. (այն) թագավորները, որոնք օգնության հասան Դիաուխիին, հիշյալ տարում նվաճեցի Լուշա երկիրը, Կասարգա երկիրը, Էրիախի երկիրը, Գուլուտախին...»:

Այստեղ մեզ մնում է ավելացնել, որ Արգիշտի I-ի տվյալ տարվա հիմնական ձեռնարկումը, ըսա երևույթին, ուղղված է եղել Էթիուսյան ցեղային միության դեմ, որի հպատակեցումը, սակայն, հիշատակվում է սոսկ վերնագրային տեքստում<sup>23</sup>: Ինչ վերաբերում է արշավանքի նկարագրության մեջ Դիաուխի ցեղային միությանը օգնության հասած



երկրների նվաճմանը, որը նույնպես տեղի է ունեցել «հիշյալ ասարում» (šišini MU), ապա նրանք երևի եղել են էթիունի ցեղային միության կամ հպատակները, կամ էլ դաշնակիցները:

Իսկ այժմ տեսնենք, թե Խորխարյան տարեգրության կրկնագրի šišini բառի համար մեր առաջարկած «հիշյալ» թարգմանությունը ինչպես է արդարացնում իրեն Այանիսի նորահայտ արձանագրության միանգամայն այլ բնույթի տեքստում, ուր այն առնչվում է Ինուանի դիցանվան հետ:

... UDU <sup>d</sup>E-i-du-ru UDU <sup>d</sup>Ba-ba-a UDU <sup>d</sup>A-di-a UDU <sup>d</sup>Sar-di-e UDU <sup>d</sup>I-nu-a-ni-i-e UDU <sup>d</sup>A-ia-a UDU <sup>d</sup>Tu-uš-pu-ni-a UDU <sup>d</sup>I-nu-a-ni-e šī-si-ni-e...<sup>24</sup>

Ինչպես ակնառու է այս ցիտված տեքստից, Խալդյան դոմենում (<sup>d</sup>Halḏinili KĀ-li), այսինքն՝ տաճարում ձեռնարկված պաշտամունքային տարաբնույթությունների ժամանակ նախատեսված կենդանիների զոհաբերություններում Ինուանի դիցունիում հատկացված է յուրահատուկ տեղ՝ ոչխարի կրկնակի մատուցում: Ըստ որում այդ մատուցումը տեղի է ունենում ոչ թե միանգամից, այսինքն՝ «երկու ոչխար Ինուանիին», այլ աստիճանաբար՝ «ոչխար Ինուանիին», «ոչխար Ինուանի šišini-ին»: Եվ դա այն դեպքում, երբ թվարկված դիցունիների շարքում Ինուանին հանդես է գալիս մերթ հինգերորդ, մերթ էլ վերջին՝ ութերորդ տեղում:

Մյուս կողմից, հատկանշական է, որ ի տարբերություն շարքային դիցունի Ինուանիի, նույնիսկ գերագույն աստված Խալդիի կնոջ՝ գերագույն դիցունի Վարբաբիի պատվին նախատեսված է եղել ընդամենը մեկ կովի զոհաբերություն: Իսկ երկուական ոչխարների զոհաբերություն պետք է իրականացվեին սուկ մնացած ըզր, այսինքն՝ անվանապես չհիշատակված, ասավածների (DINGIR<sup>MES</sup>) և դիցունիների (<sup>d</sup>NIN<sup>MES</sup>) պատվին (տեղ 13):

Ի դեպ Ինուանիի համար նախատեսված երկու ոչխարների զոհաբերության մենաշնորհը, ի տարբերություն նրա հետ հիշատակված մյուս դիցունիների, որոնց պատվին պետք է զոհաբերվեին սուկ մեկական ոչխար, հետագոտության առարկա կարող է դառնալ հետագայում՝ համապատասխան փաստական նյութի առկայության դեպքում: Սակայն šišini բառիմաստի մեկնաբանության համար այդ բացը, բարեբախտաբար, բացարձակապես ոչ մի խոչընդոտ չի կարող հարուցել: Դեռ ավելին, բացի մնացած հանգամանքներից, šišini-ն միաժամանակ նպաստում է, որպեսզի հետագոտողները անտեղի մեղադրանք չհասցեագրեն ուրարտական գրագրին, թե իբր նրա անվտայնությամբ Ինուանի դիցունիում վերաբերող միևնույն զոհաբերությունը երևի սխալմամբ արձանագրվել է կրկնակի:

Հատկանշական է, որ սեպագիր տեքստը հստակ տարբերակում է միմյանցից Ինուանի դիցուհուն նվիրված երկու զոհաբերությունները. ընդ որում որոշակի ընդմիջումով՝ մերթ Ինուանիին, մերթ էլ Ինուանի ճիճինի: Ուստի այս ամենը ինքնին վկայում է, որ Խորհարդան տարեգրության կրկնագրում այդ բառին արված «հիշյալ» թարգմանությունը նույնքան համոզիչ է նաև Այանիսի արձանագրության համար: Մի խոսքով, մի դեպքում անկա է *sisini MU haubi* «հիշյալ տարում նվաճեցի» (հմմտ. *ikukani MU haubi* «նույն տարում նվաճեցի»), իսկ մյուս դեպքում՝ *UDU Inuanie sisinie* «ոչխար՝ Ինուանի հիշյալին» (կարդա «հիշյալ Ինուանիին»):

Այստեղ, գուցե, առաջին հայացքից առարկություն կարող է ծագել սոսկ որոշի և որոշյալի շարահյուսական անհամապատասխանության վերաբերյալ՝ *sisini MU* «հիշյալ տարում», բայց *Inuanie sisinie* «Ինուանի հիշյալին»: Սակայն այդ անհամապատասխանությունը ևս լիարժեք հիմնավորում է գտնում ուրարտերենի շարահյուսական կանոնների բազմազանությամբ, եթե, օրինակ, համեմատենք *masini GISsur* «իր զենքը» և *GISuldi* ճսի «խաղողի այգի նոր», *ini barzudibiduni* «այս *barzudibiduni* տունը» և *barzudibiduni ini* «*barzudibiduni* տունը այս»:

Այսպիսով, ելնելով վերը մատուցված փաստական նյութի քննարկումից, ստորև առաջարկում ենք Այանիսի արձանագրության մեզ հետաքրքրող վերոհիշյալ հատվածի թարգմանությունը.

«...ոչխար՝ Էուրուրու դիցուհուն, ոչխար՝ Բաբա դիցուհուն, ոչխար՝ Ադիա դիցուհուն, ոչխար՝ Սարդի դիցուհուն, ոչխար՝ Ինուանի դիցուհուն, ոչխար՝ Այա դիցուհուն, ոչխար՝ Տուշպունիա դիցուհուն, ոչխար՝ Ինուանի դիցուհի հիշյալին»:

Վերջում մեզ մնում է ավելացնել, որ ինքը՝ *Inuani*-ն խոսում անուն է և նշանակում է հենց «դիցուհի», որից սերող *Inuanaue*-ն հոգնակի տրականով հայտնի է վաղուց՝ դեռևս Սեերի դռան պաշտամունքային և Չելբի-բադիի շինարարական արձանագրություններից<sup>25</sup>: Իսկ այժմ դրա գաղափարագիր համապատասխանությունը հանդիպում է Այանիսի նորահայտ սեպագրում *NIN<sup>MEŠ</sup>-ue* ձևով<sup>26</sup>: Սակայն այդ հարցը արդեն այլ հետազոտության առարկա է:



NICOLAY HAROUTHYOUNYAN

NEW READINGS AND INTERPRETATIONS  
IN THE URARTIAN AYANIS INSCRIPTION

1. New Urartian word *išerhini*

The *Tsolakert* inscription of Menuas (KUKN, 48) and the *Karmir blur* inscription of Rusa II (KUKN, 424) shows that here the word *išerhini*, probably, indicates on the time of some actions conducted by the Urartian kings; in the first case – after the conquest of Erikuahi, and the second – after Rusa's accession. The *Ayanis* inscription also, like *Karmir blur*, tells about the erection of cultic objects after the accession of the king, and in the second case – the offering of vine for the gods during the sacrifices in the temple. In all cases the word *išerhini* indicates the idea of the time.

On the other side, for the clearing of the exact meaning of *iserhini* the *Karatash* inscription of Sarduri II (KUKN, 274) offers a decisive argument; here this word is replaced by *ikukani MU* „in the same year“. Certainly, *išerhini* „in that time“ actually is a homonymous word to *ikukani MU* „in that year“.

Indeed, the editor of the *Ayanis* inscription M. Salvini is correct when regards *išerhini* as an adverb. This word actually is an adverb of time.

2. New etymology of the word *šišini*

The lines 33–35 of the *Khorkhor Annals* (duplicate = KUKN, 174B1) contains the next statement:

<sup>m</sup>Argištiše <sup>m</sup>Menuahiniše alie ... šišini MU haubi <sup>KUR</sup>Lušae KUR–nie  
<sup>KUR</sup>Katarzae KUR–nie <sup>KUR</sup>Eriahi KUR–nie

This passage reminds one those of Urartian annals where the conquest of hostile countries which had taken place in the given year, is introduced by *ikukani MU haubi* „I conquered in the same year“. Probably, *ikukani MU* is a variant of *šišini MU*, the latter to be translated as „in the aforementioned year“. This is the case in the next passage from the *Khorkhor* inscription:

„Argišti, the son of Menua, says ... in the aforementioned year I conquered the country of Lusa, the country of Qatarza, the country of Eriahi ...“.

How the word *šišini* could be translated in the *Ayanis* inscription where it is used in a different context:

... UDU <sup>d</sup>Eiduru UDU <sup>d</sup>Baba UDU <sup>d</sup>Adia UDU <sup>d</sup>šardie UDU <sup>d</sup>Inuanie UDU  
<sup>d</sup>Aia UDU <sup>d</sup>Ṭušpunia UDU <sup>d</sup>Inuanie šišinie ...

It is worth to note that the text distinguishes between two different deities bearing the same name *Inuani*. The translation „a ship for the aforementioned Inuani“ (UDU <sup>d</sup>Inuanie šišinie) should not look puzzling.

The translation of the whole passage from the *Ayanis* inscription: „... a ship for Eiduru, a ship for Baba, a ship for Adia, a ship for Sardi, a ship for Inuani, a ship for Aya, a ship for Ṭušpunia, a ship for the aforementioned Inuani“.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մերոպր Սմրատեանց, «Արարատ». Վաղարշապատ. 1886. ցերդիր B 500–501 էջերի միջև: D. H. Müller, Drei neue Inschriften von Van, II. Inschriften von Zolakert. "Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes". Wien, 1887, I Band, 3 Heft, էջ 216–219:
2. Н. В. Арутюнян, Новые урартские надписи Кармир–блугра, Ереван, 1966, էջ 38, տերտ I, տող 4: Г. А. Меликишвили, "Вестник древней истории", 1971, № 4, էջ 267, տող 4: Н. В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей (այսուհետև՝ КУКН), Ереван, 2001, էջ 348, № 424, տող 4 և ծանր. 5:
3. M. Salvini, Ayanis, I, Roma, 2001, էջ 254, (I, 5), 258 (V, 55):
4. Н. В. Арутюнян, КУКН, 48, տողեր 1–7:
5. Նույն տեղում, 50, տողեր 2–4:
6. Նույն տեղում, 49, տողեր 1–3:
7. Նույն տեղում, 101, երեսի կողմ, տողեր 5–8, 21–25:
8. M. Salvini, Ayanis, I, էջ 254, (I, տողեր 4–6):
9. Նույն տեղում, էջ 257–258 (V, տողեր 5–11):
10. Н. В. Арутюнян, КУКН, 148, տողեր 6–8:
11. Նույն տեղում, 49, տողեր 1–3:
12. Նույն տեղում, 248, տողեր 2–6:
13. M. Salvini, Ayanis, I, էջ 259, (I, 5):
14. A. H. Sayce, "Journal of the Royal Asiatic Society". XIV, London, 1882, արձանագրություն № 20:
15. M. Salvini, Ayanis, I, էջ 254, (II, 2):
16. Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, 128В1, տող 34 և ծանր. 13:
17. A. Geotze, "Revue Hittite et Asiatique", 24, Paris, 1936. էջ 282:
18. F. W. König, Handbuch der chaldischen Inschriften, II, Graz, 1957, № 82, Rs., տող 34:
19. И. М. Дьяконов, Урартские письма и документы, М. —Л., 1963, էջ 76 (և ծանր. 122), 91:
20. Н. В. Арутюнян, КУКН, 174В1, տող 34 և ծանր. 14, ինչպես նաև էջ 464:
21. M. Salvini, Ayanis, I, էջ 259, (II, 2):
22. Н. В. Арутюнян, КУКН, 174В1, տողեր 33–36:
23. Նույն տեղում, 174В1, տողեր 27–29:
24. M. Salvini, Ayanis, I, էջ 259, (II, 1–2):
25. Н. В. Арутюнян, КУКН, էջ 449:
26. M. Salvini, Ayanis, I, էջ 254, (II, 2):